ՈՒՇԱՊ ԴԱՌԱԾ ՄԵՌԵԼԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլել ա, չի ըլել մի թքավոր. էդ թքավորը չոր ա ըլել, էրեխա չի ունեցել։ Թքավորը էլլըկին էլ մտիկ անելիս չի ըլել, իրան մըտքի միջին շատ միտք անելիս ա ըլել, թե՝ իմ հարստութինը ընձանե եդնը ո՞վ պիտի ուտի, իմ անունն էլ աշխարքիցը կկորչի։ Ըտուր հմա ամեն բանն էլ մտիցը գձած ա ըլում։
Օրերի մի օրը էդ թքավորի ամարաթը մի Դավրիշ ա գալի։
Օխտն օր մնում ա Դավրիշը։ Ո՛նչ Դավրիշը ինքը բան ա ասում, ո՛նչ էլ թքավորը բան ա հարցընում։
Օխտն օրից եդնը թքավորը հարցընում ա Դավրիշին.— Խի՞ ես էկել։
Դավրիշն ասում ա.— Էս օխտն օր ըստի եմ, խի՞ ես նոր հարցնում։
Թքավորն ասում ա.— Մենք ադաթ ունենք, որ ղոնաղ էկած մարդին օխտն օր բան չհարցնենք, ուտեցնենք, խմեցնենք։ Հըմի ինչ ունես ասելու, ասա՛։
Դավրիշն ասում ա.— Ես էկել եմ, որ քու դարդը իմանամ, կըլի որ դարման անեմ։
Թքավորն ասում ա.— Իմ դարդին դու կարալ չես դարման անես։ Քյասիբ մարդ ես, մի քանի ոսկի ա՛ռ, գնա՛։
Դավրիշն ասում ա.— Չէ՛, ես քու դարդը պետք ա իմանամ ու դարման անեմ, ասա տենանք։
Թքավորն ասում ա.— Ես չոր եմ, ո՛նչ տղա ունեմ, ո՛նչ ախչիկ։ Էս հարստութինը ընձանե էդնը ո՞վ պրտի ուտի։
Դավրիշն ասում ա.— Ես որ ընենց բան անեմ, որ քու կնիկը երկու տղա բերի, մինն ինձ կտա՞ս։
Թքավորը ծիծաղում ա։— Կտա՛մ,— ասում ա։
Դավրիշը հանեց մի խնձոր, վրեն գիր գրեց, տվեց թքավորին, ասավ.— Կեսը դու կի, կեսը՝ կնիկդ։
Ասավ ու թողուց գնաց։
Թքավորը խնձորը կես արավ, կեսը կնկանը տվուց, կեսը ինքը կերավ։
Իննը ամիս, իննը օր, իննը սըհաթը թմըմեց, թքավորի կնիկը խտոր ընկավ, բերուց մի տղա։ Էրկու տարի անց կացավ, էրկու տարուց եդնը էլ բերուց մի ուրիշ տղա, դրանե եդն էլ էրկու տարի անց կացավ, էլի բերուց մի տղա, էլան իրեք տղա։
Մի տաս, տասնըհինգ տարի անց էկացավ, տղեքը մենձացան, շկոլը գնացին։ Թքավորի կնիկը դարդ էր անում, թե հրես Դավրիշը կգա, մի տղեն կտանի։
Թքավորն ասում էր.— Ես Դավրիշին տղա չեմ տալ, դու արխեին կացի, աղքատ մարդ ա, փող կտամ, ճամփա կդնեմ, նա խո զոռագին ինձանե չի կարա տղա տանի, ես՝ թքավոր, նա՝ մի աղքատ դավրիշ։
Մի վախտ անցկացավ, Դավրիշն էկավ։ Թքավորին ասավ.— Աչքդ լի՛ս, ես ասել ի էրկու տղա կբերի կնիկդ, հմի իրեքն ա բերել։ Էրկուսը քեզ, մինն՝ ինձ։
Թքավորն ասավ.— Քի տալու տղա չունիմ, ինչ ղդար փող ուզում ես՝ ա՛ռ, գնա՛։
Դավրիշն ասավ.— Ես փողի կարոտ չեմ։ Ինչ որ քեզ հետ խոսացել եմ, էն խոսքի տերն եմ։
Թքավորը բարկացավ Դավրիշի վրա։
Դավրիշը հթաթա տալով թողուց դուս էլավ։ Տղեքը շկոլից գեին, իրեքն էլ իրար եդնա։
Դավրիշը գնաց պուճուր տղին վե կալավ ու երկինքն էլավ։ Թքավորին իմացում տվին, թե. «Դավրիշը տղեդ տարավ»։

Թքավորը ղոշունը բերուց։ Նա երկնքովն էր գնում, ղոշունը գետնին, ի՞նչ պըտի աներ։ Կարացին ոչ մի բան էլ անիլ։
Դավրիշը տղին տարավ։
Թո՛ղ թքավորն ու ղոշունը մնան իրանց տեղը, հմի ասենք տղիցը, թե Դավրիշը տղին ինչ արավ։
Դավրիշը տղին թե շատ տարավ, թե քիչ տարավ, աստված գիտի, տարավ մի բանձր քարափի կես տեղը մի քամանդ կար, էրկու մարդու կաղնելու տեղ, տարավ ընդեղ վեր բերուց։ Էդ քարափի տկովը մենձ ջուր գներ. էն քարափի արթնակումը ադա կար։
Դավրիշը կաղնեց էդ քամանդումը, ծերքին տղին ասավ, թե.— Ես ըստի գիր պետք ա կարդամ, ըստեղ մի դուռ բաց կըլի, էդ դռնովը դու նի կմտնեա, մի ղութիկ կա, պուճուր ղութի, էն ղութիկը դու դուս կբերես, էրի միջին շատ բան կա, ուրիշ բան վեր չես ունիլ, թե չէ՝ դուռը կփակվի վրեդ։
Դավրիշն սկսեց կարդալ։ Նրա կարդալովը մի դուռ բաց էլավ։ Թքավորի տղեն նի մտավ, ղութիկը վե կալավ, դրուց իրան ծոցումը, մտիկ արավ, որ էրի միջին ուրիշ բաներ շատ կա, լավ-լավ ղամենի կար, որ դինն ու դաստեն ոսկուց էր շինած։ Մինը վե կալավ էն ղամենուցը, դրուց ջեբը, ուզեց դուս գա, տեհավ դուռը փակվեց։ Ղի տվուց միչի կռնուցը.— Դավրի՛շ, դուռը բաց արա։
Դավրիշը ձեն տվուց դրսի կռնիցը.— Ո՞նց բաց անեմ,— ասավ,— ծելքին քի ասի՝ թե ուրիշ բան չըվեր ունես, խի՞ վեր ունեիր, որ փակվեր։
Դավրիշը թողուց ու գնաց։
Էդ տղեն թե մի օր մնա, թե էրկու օր մնա էդ էրումը, գիտողն աստված ա, տեհավ մի լիս էրևաց։ Դու մի ասիլ՝ Աղվեսը իրան համար մի ծակ էր բաց արել, գալիս էր ըստեղ չանդակնի էր ուտում. Դավրիշը շատերին բերել էր ընտեղ գձել։ Էս տղեն էդ Աղվեսի ծակովը ուժ ու կուռ արավ, դուս էկավ ադեն։ Տեհավ ջրի էն ղրաղը տավարն արածացնում ա, ձեն տվուց նախրչուն.— Քեռի՛, մի ձի վեր իլ, արի ինձ անցկացրու էս ջուրը։
Նախրչին ասավ.— Իմ կենքումը ձի վեր էլած չեմ։
Տղեն ասավ.— Մի գոմեշ անցկացրու, ես անց կկենամ։
Նախրչին մի գոմեշ անցկացրուց, տղեն վեր էլավ, ջուրն անց կացավ։
Նախրչին ասավ.— Ի՞նչ տղա ես։
Տղեն ասավ.— Անտեր տղա եմ։
Նախրչին ասավ.— Ես քի՝ հեր, դու ինձ որդի։
Տղեն ասավ.— Շա՛տ լավ կըլի։
Մի շաբաթ իրուր հետ նախիրը գնացին, մի շաբթից եդնը մի օր նախրչին բան ուներ, եդ ընկավ, տղեն մենակ գնաց նախիրը։ Նախրումը վախտը տղեն ղութիկը միտքն ընկավ։
Ասավ.— Մի բաց անեմ, տեսնամ՝ էս ղութիկի մեչն ի՞նչ կա։
Ղութիկը բաց արավ, ղութկիցը դուրս էկան քառասուն արաբ, ամենքի ձեռին մի էրկաթե գուրզը։
Ասին.— Թքավորի տղա՛, աշխարհը քանդե՞նք, թե՞ շինենք։
Թքավորի տղեն ասավ.— Ո՛նչ քանդեցեք, ո՛նչ շինեցեք, դուք ձեզ հմա հանդարտ կացեք։
Դրանք մտան ղութիկը, ղութկիցը քառասուն աղջիկ դուս էկան ու պար էկան, ամենքը մի քիսա ոսկի բերին դրին տղի աղաքը, քառասուն քիսա ու մտան իրանց տեղը։
Նախրչին էկավ նախրի կուշտը։
Տղեն ասավ.— Ապի՛, մի աման բի, էս օսկիքը տար քու տունը։
Նա ամանը բերուց, ոսկին տարավ իրան տունը։

Օրիցը դեռ մխելի կար, տավարը տարան գեղն արին։
Տավարատերերն ասին.— Էս չախը տավարը ո՞ւր եք բերել, գեղն արել, դեռ օր կա։
Եդնա էլ ասին.— Ի՞նչ արել եք, արել եք, էլ եդ տանիլը աժի ոչ, ռավոտը վաղ կտանեք։
Ռավոտը վե կացան տվարատերերը նախրչուն ղի տվին.— Ա՛յ տղա, էրեկի ճաշին բերել ես, էսօր ճաշ ա դառել, վեկաց, տա՛ր, էլի՛։
Նախրչին ասում ա.— Էլ կարալ չեմ, ամենքդ ձեր տվարին տերութին արեք։ Ես մենձացել եմ, ճոներս ցավում ա, էլ կարում չեմ տավարը գնամ։
Դրանե եդն էլ գնաց ոչ նախրչին։
Տղեն մնաց նախրչու կշտին էրկու ամիս։ Օրերից մի օր տղեն ասավ նախրչուն.— Նանի՛ ու ապի՛, մնաք բարով, ես գնում եմ։
Նախրչին ասավ.— Ա՛յ որդի, քեզ ի՞նչ ա ըլել, որ գնում ես։
Տղեն ասավ.— Մի բան էլ ա ձեզանե կերել չեմ, ձեզ հարըստացրել եմ, հմի էլ գնում եմ։
Էդ խոսքն ասավ ու գնաց։ Նախրչին ու իրա կնիկն էլ կարանին ոչ բան ասեն։
Թե շատ գնաց, թե քիչ գնաց տղեն, դրա գնալը աստված գիտե, գնաց մի գետի ղրաղին մի գերեզմանուտ, տեհավ գերեզմանուտումը մի մեռել, էդ մեռելին էրկու մարդ վեր են հատում ու ուշունց են տալի։
Ասավ.— Ա՛յ մարդիկ, շըշացել ե՞ք, որ էդ մեռած մարդուն վեր եք հատում։
Նրանք ջուղաբ տվին, թե. «Սա մեր պրտքատերն ա». մինն ասավ. «Ինձ հարիր մանեթ ա տալացուկ», մինն ասավ. «Ինձ հիսուն մանեթ ա տալացուկ»։
Էդ տղեն հանեց տվուց էդ փողը. ընդեղ կեին հորթարած, տվարած էրեխեք։ Դրանց փող տվուց, ասավ.— Գնացեք մի տերտեր բերեք, մի ֆողհատ։ Գնացին բերին։ Դրանց փողերը տվուց ու մեռելին թաղել տվուց, թողուց ու գնաց։
Գնաց, շատ գնաց, քիչ գնաց, աստված գիտի, գնաց մի քաղաք։ Էդ քաղաքը թքավորի քաղաք էր, գնաց մի խաշապանի դուքանի դուռ, ընդեղ դուքանչուն բարիլիս տվուց։
Դուքանչին ասավ.— Ասսու բարին քե՛զ։
Էդ տղեն մնաց ընչվել իրիկուն էդ դուքանի դռանը։ Իրիկունը ամենքը իրանց տունը գնեին, դուքանչին էլ ուզում էր իրան տունը գնալ, էն տղեն դեռ ընդի էր։
Ասավ.— Ա՛յ տղա, ռավոտին էկել ես ըստի, դեռ հլա ըստի ես։ Նոքարը իրան տանը գնաց, աղեն էլ իրան տունը գնաց, ղարիբ մարդիկ էլ իրանց հմա տեղ ճարեցին, բա դու խի՞ ես կաղնել։
Տղեն ասավ.— Ես տեղ չունեմ, որդի՞ գնամ։
Խաշապանը տղի գլխին բռնձկեց, դուքանը գձեց, դուքանի դուռը փակեց ու գնաց։
Տղեն սոված էր, ճրագ վառեց, խաշապանը էփած խաշ ուներ, մխելի կերավ, կշտացավ։
Ղութիկը հանեց, բացեց, արաբնին դուս էկան. «Հա՛,— ասին,— թքավորի տղա՛, աշխարհքը քանդե՞նք, թե՞ շինենք»։
Թքավորի տղեն ասավ.— Ո՛նչ քանդեցեք, ո՛նչ շինեցեք։ Ձեզ հմա հանդարտ կացեք։
Արաբնին նի մտան, քառասուն աղչիկ դուս էկան, պար էկան, եդնա ամենքը մի քիսա ոսկի բերին էդ տղի աղաքին դրին ու նի մտան ղութու մեջ։ Տղեն ոսկիքը դախլի վրա կիտեց։
Ռավոտը լիսացավ, խաշապանն էկավ։ Դուռը բաց արավ, տեհավ ոսկին կիտած։
Տղեն ասավ.— Քշերս էդար առուտուր եմ արել քի հմա։
Խաշապանը չոր էր, ո՛նչ տղա ուներ, ո՛նչ ախչիկ, վազեց տղին փթաթվեց, պաչ արավ, ասավ.— Ես քի՝ հեր, դու ինձ՝ որդի։
Տղեն ասավ.— Թող քու ասածն ըլի։

Ասավ.— Դու, որ էսդդար փող ես աշխատել, էս խաշապանութենումը օգուտ չկա, չովդարութին անենք։
Տղեն ասավ.— Էդ իմ բանը չի, դու գիտես։
Դա փողը վե կալավ, գնաց, շատ ապրանք առավ։ Ապրանքը բերուց իրանց քաղքի ղրաղը, մարդ ղարկեց տղի կուշտը թե. «Ես ապրանքը բերել եմ, արի ինչ գնով ուզում ես, ծախի»։
Տղեն գնաց ապրանքի կուշտը, խաշապանը էկավ իրան տունը։
Սկսեց տղեն էժան ծախիլը, ո՛ր ապրանքն աժեր տասը մանեթ, տվուց հինգը մանեթի, ո՛րը աժեր քսան մանեթ, տվուց տասը մանեթի, ըտենցով գլխիցը ռադ արավ։
Մթնեց։ Ըղու էլավ, որ գա խաշապանի տունը, շատ մութն էր, տունը դուլաջ գձեց։ Տեհավ մի լիս ա էրևում, էդ լիսի վրա գնաց, տեհավ մի թքավորի ամարաթ, օքմին չկա միջին։ Նի մտավ, տեհավ, սուփրեն գձած, կերակուրնին շարած, մի տեղ գձած։
Նստավ մխելի կերավ էդ կերակուրներիցը, կշտացավ, խմիչքը կար՝ խմեց խմիչքից, քեփովվեց, շորերը հանեց դրեց գլխի տակին, մտավ էն տեղի մեչը, ինքն իրան հասկացավ ոչ՝ ինչ բանի ա, ու քնեց։ Էդ ամարաթը թքավորի ախչկա ամարաթն էր, էդ իրիկունը թքավորը ղոնաղլուխ ուներ. ախչկանն էլ էր կանչել։ Ախչիկը էկավ, տեհավ իրան տեղաշորումը մի տղա քնած, վեր ունիլ տվուց ու դուս գձեց։ Քշերվա մի վախտը տղեն զարթնեց, ինքն իրան տեհավ, որ մի փոխանն ա հագին, մինէլ իրան շապիկը։ Վե կացավ գնաց խաշապանի տունը։
Ասավ.— Ղազախնին էկան ինձ թլանեցին, փողս էլ տարան, շորերս էլ։
Ասավ խաշապանը.— Դու մի քշերումը քառասուն քիսա փող էս աշխատում, էլ կաշխատես, բան կա ոչ։
Ռավոտը լիսացավ, թքավորի ախչիկը վե կացավ, տեհավ տղի շորերը բարձի տակին ա, բարձի տակիցը հանեց, տեհավ ջեբումը մի մենձ բան կա, հանեց, տեհավ, մի ղութիկ, մին էլ մի պուճուր ղամա։ Ղութիկը բաց արավ արաբնին դուս էկան, սկսեցին էդ տան կենողնուն չարդ ու փուրդ անիլ։
Ընչվելի խարարը գնաց թքավորին, թե.— Ըստե մի զարմանք բան կա։
Էկավ թքավորն էլ տեհավ, զարմացավ, հրամայեց, որ ման գան, էն տղին գտնեն։ Ման էկան էն տղին, գտան։
— Ռիկվա ըստի քնած տղեն դու՞ իր,— ասին։
Տղեն ասավ,— Ե՛ս ի։
Ասին.— Կորցրու էս բաները ըստիան։
Էն սհաթին էկավ տղեն, ասավ արաբներուն.— Տեղներդ հանդարտացեք։
Հանդարտացան արաբնին։ Իրան շորերը, իրան ղութիկը թքավորը հրամայեց, որ. «Մի սհաթումը դուրս ըլի էդ քաղաքիցը՝ կորչի»։
Էդ տղեն գնաց իրան ղութիկը բաց արեց, արաբնին դուս էկան, ասին.— Շինե՞նք, թե՞ քանդենք աշխարհը։
Ասավ.— Ո՛նչ շինեցեք, ո՛նչ քանդեցեք, հանդարտվեցեք, ձեր տեղերը գնացեք։
Նրանք գնացին իրենց տեղը։ Էդ տղեն տարավ էդ ոսկին՝ կեսը տվեց թքավորին, կեսը՝ թքավորի կնկանը։ Թքավորը զարմացավ, ասավ.— Ես թքավոր եմ, էս թավուր ոսկի չունեմ, տես ինչ թավուր ոսկի ա տվել ինձ։
Կնիկն ասավ.— Ինձ էլ ա տվել։
Ասին.— Բա էդ տղին մենք ի՞նչ տանք ըտուր տեղը։
Թաքավորն ու իրան կնիկը մասլահաթ արին, ասին.— Բան չունենք տալու, մեր ախչիկը տանք էդ տղին։
Տղին կանչեցին, ասին.— Մեր ախչիկը քի ենք տալի, ուզում ե՞ս, թե չէ։

Տղեն ջուղաբ տվուց, ասավ.— Որ դուք տալիս եք, ես էլ կուզեմ, ամա մի խաշապան հերն ունեմ, թող նրա խոսքովն ըլի։
Խաշապանին կանչեցին, ասին.— Մեր ախչիկը տալիս ենք քու տղին, կառնե՞ս։
Ասավ.— Ես ձեր ծիծղատեղը չեմ։
Նրանք ասին.— Դրո՛ւստ տալիս ենք։
— Տալիս եք, ես էլ կուզեմ։
Ուզեց ու չուստ հրսանիք արավ. հրսանիք ըլելու վախտը տղեն ասավ.— Ինձ խաշապանի տունը չէք ղրկիլ, ինձ ըստեղ ոտը կանեք մի վախտ։
Հըրսանիք արին, օխտն օր, օխը քշեր ու տղին ղրկեցին ոչ խաշապանի տունը. տղեն մնաց թքավորի ամարաթը հըչկել վեց ամիս։
Վեց ամիս եդնը մի օր ցերեկով տղեն քնած էր, թքավորի ախչիկը զարթուն նստած էր իրանց ամարաթի մեչը։ Տղեն քնած վախթը լաց ըլեր։ Ախչիկը գնաց վի կացրուց, ասավ.— Խաշապանի տղա՛խի՞ էս լաց ըլում։ Ուզում է՞ս խաշապանի տունը գնաս։
Ասավ.— Ես խաշապանի տղեն չեմ։ Խաշապանի հերն էլ անիծած, իրան տղի հերն էլ։
Ախչիկը հարցրուց.— Բա դու ո՞ւմ տղեն էս։
Ասավ.— Ես Արևմտյան թքավորի տղեն եմ։
Ախչիկը ասավ.— Հըմի ի՞նչ էս ուզում անես։
Թե.— Իմ հերն ու մերը միտքս են ընկել, ուզում եմ, որ գնամ իմ երկիրը։
Ախչիկը թե.— Բա ե՞ս։
Թե.— Քի էլ տանեմ թքավորի հրամանովը։
Ախչկերանց մազերը երկեն ա, միտքներուն կարճ, չուստ գնաց հորը՝ թքավորին խաբար տվուց.— Էդ տղեն խաշապանի տղեն չի, Արևմուտքի թքավորի տղեն ա, ուզում ա, որ գնա իրան հոր երկիրը, ինձ էլ տանի։ Քու կամքին ա ճամփա պահում։
Թքավորը կանչեց էդ ռավոտը էդ տղին, հարցրուց.— Ուզո՞ւմ ես գնալ, թե չէ։
Տղեն ջուղապ տվուց, ասավ.— Ուզում եմ քո կամքովն ըլի։
— Դե որ ըթենց ա,— ասավ,— կացի ըստի ընչկել էրկու ամիս, էրկու ամսեն եդը ես քի ճամփա կգձեմ։
էրկու ամիս կացավ տղեն, էրկու ամսից եդը թքավորն ասավ.— Վադետ թմամե՞ց գնալու։
Տղեն էլ ասավ.— Թամամ ա։
Ասավ թաքավորին տղեն.— Մին գնամ խաշապանի տունն ու գամ, ընդուց եդնը ինձ ճամփա գձե։
Գնաց խաշապանի տունը, շատ ոսկի բախշեց խաշապանին ու ասավ.— Մնաք բարով։
Խաշապանն ասավ.— Իմ որդին ես, ո՞ւր ես գնում։
Տղեն ասավ.— Քեզնե կերած չունեմ, խմած չունեմ, ճանաչ մարդ իր՝ էդ փողերն էլ քի եմ տալի, խի՞ չես շնորակալ ըլում։
Խաշապանը շնորակալ էլավ ու օխնեց նրան, ասավ.— Աստվածը քի բարի ճամփա տա։
Տղեն թողաց ու գնաց թքավորի տունը։ Թքավորը նրա գնալու թդարեքը տեհել էր, օխնեց ու ճամփա գձեց, հետը շատ ղոշուն դրուց, ասավ դրանց.— Դրան ընչկել դրա հոր սինոռը կտանեք, մի մազ չթեքվի դրանցե։
Դրանք ճամփա ընկան, գնացին։
Մի իրեք օրվան ճամփա որ գնացին, թքավորի տղեն ղոշունը եդ տվուց, թե, ասում ա.— Ինձ պետք չեք դուք։
Եդ դառան ղոշունը, դա մենակ գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, աստված գիտի շատն ու քիչը, մին էլ մտիկ արավ, տեհավ աղաքիցը մի թոզ ա գալի, որ աշխարհը բըռնած ա, մտիցն ընկավ իրան ղութիկն էլ, իրան արաբնին էլ։ Թոզը էկավ մոտեցավ, տեհավ մի Ուշապ։
Ուշապն ասավ.— Թքավորի տղա, արի ես ու դու ախպերանանք։
Ասավ.— Ախպերացա քու հետ, Ուշապ ախպեր։
Ուշապն էլ ընկերացավ, վե կացան գնացին։ Գնացին, արևը որտեղ որ մեր մտավ՝ ընդեղ մնացին։
Թքավորի տղին ու թքավորի կնկան ասավ.— Իմ ախպեր ու իմ հարսը, դուք քնեցեք, ես ղրաուլ քաշեմ։
Դրանք քնեցին, Ուշապը ղրաուլ քաշեց։ Քշերվա մի վախտը էկավ էն Դարվիշը ասավ.— Թքավորի տղա, շան տղա, հա՛մ ղութիկն ես տանում, հա՛մ ղամեն ես տանում, հա՛մ թքավորի ախչիկը։
Ուշապն ասավ.— Անկաճս խուլ ա, իմանում չեմ, մոտիկ արի տենամ ինչ ես ասում։ Մոտիկ էկավ Դավրիշը, Ուշապը թուրը հանեց Դավրիշի գլուխը տվուց, Դավրիշի կարկաժը էրկու կտոր էլավ։ Կարկաժի միջիցը, որ թուրը եդ հանեց, ետ սղացավ, ու Դավրիշը փախավ, գնաց։ Ռավոտը լիսացավ, ճամփա ընկան։ Գնացին, էտ իրիկունը որտեղ որ մթնեց, ընդեղ մնացին։
Ուշապն ասավ.— Քնեցեք դուք, իմ ախպերն ու իմ հարսը։
Նրանք ասին.— Հըմի էլ դու քնե, քշերիս զարթուն ես էլել, թքավորի տղեն ղրաուլ անի։
Ուշապն ասավ.— Չէ՛, ես որ քնեմ, իմ վե կենալը շատ դժար ա, օխտն օր պետք ա քնեմ։
Էդ քշերն էլ մնաց Ուշապը ղրաուլ։ Էկավ Դավրիշը ասավ.— Թքավորի տղա՛, ղութիկն էլ ես տանում, ղամեն էլ ես տանում, թքավորի ախչիկն էլ ես տանում։
Ասավ Ուշապը.— Անկաճնիս խուլ ա,— ասավ,— արի տենամ ի՞նչ ես ասում։
Դավրիշը ջուղապ տվուց.— Մին էլ գամ՝ գլուխս էրկու կտոր անե՞ս։
Ու թողուց, գնաց։
Վրա իրեք օրը ծելքվի պես, ոնց որ իրանց սովորութինն էր, վեր էկան։
Ուշապն ասավ.— Քնեցեք դուք։
Թքավորի տղեն ասավ.— Ես պետք ա ղրաուլ քաշեմ։
Ուշապն ասավ.— Դու գիտես։
Ուշապը քնեց, թքավորի տղեն ղրաուլ քաշեց, Դավրիշն էկավ իրան վախտը, առաջվա պես ասավ.— Թքավորի տղա, ղութիկն էլ ես տանում, ղամեն էլ ես տանում, թքավորի ախչիկն էլ ես տանում։
Թքավորի տղեն իրան վախիցը ղութիկն էլ մտիցը ընկավ, արաբնին էլ։ Դավրիշն էկավ, թքավորի տղին մի սիլա տվուց, թքավորի տղեն նվաղեց. ղութիկն էլ առավ, ղամեն էլ առավ, ախչըկան էլ առավ, գնաց Սև ծովի ու Սպիտակ ծովի արանքը. ընդեղ մի ադա կար, էն ադումը մնաց։
Ուշապը թե շատ քնեց, թե քիլ քնեց, տղի ահը սրտումն էր, վե կացավ, տեհավ տղեն նղաված։ Տղին ջուր վրա տվուց ու վե կացրուց։ Տղեն վե կացավ, տեհավ, որ ո՛նչ կնիկ կա, ո՛նլ ղութիկ, ո՛նչ ղամա։
Ուշապը ասավ թքավորի տղին.— Բա որ քի ասում ի՝ ես ղրաուլ քաշե՞մ։ Դու ըստի կաց, ընչվել քառասուն օր, թե քառասուն օրումը գամ՝ գամ, թե գամ ոչ՝ դու գնա քու ճամփեն։
Ուշապը ճամփա ընկավ Դավրիշի մոտ։ Դավրիշի մերը ատամնին վեր էր ածել ինձ պես, ասավ.— Ինձ տանիլ պտիս քու տղի կուշտը։ Դավրիշի մերն ասավ.— Բա՛, բա՛, բա՛, բա՛։
Ուշապն ասավ.— Չո՛ռ, աստծու կրա՛կ, մենձ թիքեդ անգաջդ կթողում։

Դավրիշի մերը օձին օվսունեց, շինեց ղամշի, մի խնոցու վրա ինքը նստեց, Ուշապին դրեց իրան թարքին ու էլավ երկինքի մի ղաթը, ծովի վրայովն անց կացավ, ադումը տարավ վեր դրուց։
Ուշապը ղումը քանդեց, Դավրիշի մորը ճտից հետ ղմումը թաղեց, որ կարենա ոչ դուս գա, փախչի, ինքը մնաց ադումը։
Ուշապը գնաց ման էկավ, իրան հարսին գտավ, Դավրիշին քնած տեհավ։ Հարսին հարցրուց, ասավ.— Հարսը ջա՛ն։
Հարսն ասավ.— Ի՞նչ ա, տեգրը ջա՛ն, ինչ ասես՝ կկատարեմ։
Ասավ.— Էդ շունը վաղ ա քնել, թե՞ նոր։
Ասավ.— Վաղ ա քնել, օխտն օր քնում ա. վեց օր քնել ա, մին օր ա մնում, որ վե կենա։
Ասավ.— Քանի՞ օր զարթուն կենալ պտի։
Ասավ.— Օխտն օր էլ զարթուն կենալ պտի։
Ասավ.— Դու դրան հարցրու, տես դրա ֆոքին որդի ա։ Ես էս օխտն օրը դեսնի տապ կանեմ։
Ասավ.— Շա՛տ լավ։
Դավրիշը վե կացավ։
Թաքավորի ախչիկը ասավ Դավրիշին.— Օխտն օր քնում ես, օխտն օր էլ զարթուն ես, հմա կորած ես կենում, ես մենակ շըշանում եմ, դու ինձ բերել ես մենակ մի ֆոտ ունելու համա։ Ֆոքուդ տեղն էլա ասա, նրա հետ զրից անեմ, շըշանամ ոչ։
Ասավ Դավրիշը.— Իմ ֆոքին էդ ավլի միչին ա։
Գնաց լավ-լավ փալասնի բերուց, ծածկեց էդ ավելը ու չորսի կռանը մոմ վառեց։ Դավրիշը ծիծաղեց, ասավ.— Ի՞նչ կա էդ չոր ավլի միչին։
Թքավորի ախչիկը լաց էլավ։
Դավրիշը ասավ.— Խի՞ ես լաց ըլում։
Ասավ.— Խի՞ ես ինձ խաբում։
Դե՛,— ասավ,— Էդ սան միչին ա։
Թքավորի ախչիկը գնաց սան չորս կուռնը զարդարեց, մոմեր վառեց։
Դավրիշը մին էլ ծիծաղեց։ Թքավորի աղչիկն էլի լաց էլավ։
Դավրիշն ասավ.— Լաց մի՛ լիլ, հըմի դյուզգուն շանց կը տամ տեղը։
Դավրիշի տան աղաքին կար մի մենձ չինարի, չինարիքին էնքան մենձ էր, որ ո՛նչ մարդ կարար վեր ըլի, ո՛նչ էլ կտրի։ Չինարիքի գլխին մի մենձ բուն կար շինած։
Դավրիշն ասավ.— Տեսնո՞ւմ ես էդ բունը, էդ բնի միչին մի ղութիկ կա, ղութիկի միչին իրեք ծիտ, էդ ծտերն են իմ ֆոքին, քանի որ դա կա, ինձ մահ չկա։
Թքավորի ախչիկը տարավ մոմերը էդ չինարի վրեն վառեց։
Օխտն օրն էկավ անց կացավ, Դավրիշը քնեց, էկավ Ուշապը։
— Հարսը ջա՛ն,— ասավ,— յարաբ իմացա՞ր Դավրիշի ֆոքու տեղը։
Ասավ.— Իմացա՛. էս չինարիքի գլխին մի բուն կա, բնի մեչ մի ղութիկ կա, ղութկի միչին իրեք ծիտ կա, էդ ծտերն ին Դավրիշի ֆոքին։
— Շատ դժար ա,— ասավ,— հարսը ջա՛ն, դրա կտրիլը կամ վեր ըլիլը։
Ասավ ու սկսեց չինարիքի տակռիքի չորս կուռը քանդիլ։ Չկել քանդեց, որ չինարիքին տկռապոկ արավ, իրեք օր, իրեք քշեր չալիշ էկավ վրեն։ Գնաց վեր ընկած ծառի ծերին բունը գտավ, տեհավ, որ բնի միչին մի ղութիկ կա, ղութիկը վե կալավ ու բաց արավ, տեհավ իրեք ծիտ կա միչին, ծտերը խեղդեց տեղն ու տեղը։ Էկավ հարսի կուշտը, ասավ.— Հարսը ջա՛ն, ղութիկն ու ղամեն վի կալ գնանք, իմ ախպերը ճամբապահ ա։
Հարսը ղութիկն ու ղամեն վեկալավ, ու ըղու էլան։

Գնացին Դավրիշի մոր կուշտը, հանեց Դավրիշի մորը ղմիցը.— Էս սհաթին,— ասավ,— ինձ ու իմ հարսին տանիլ պտես ծովի էն ղրաղը։
Մինն էլ թաքլար էրկու հետ պառավը բա՛, բա՛, բա՛, բա՛ արավ։
Ուշապն ասավ.— Զահրըմարը քի՛, տար, թե չէ՝ մենձ թքեդ անկաճդ կըթողում։
Նորից ման էկավ, մի օձ գտավ, օձին սպանեց ու շինեց իրան հմա ղամշի, ինքը խնոցու վրա նստեց.
Ասավ Ուշապին.— Դու ու քու հարսն էլ կշտիս նստեցեք։
Ուշապն ու հարսն էլ նստեցին։ Օձովը խնոցուն տվուց, խնոցին բանձրացավ, բանձրացավ ու ծովն անցկացրուց։ Գնացին ծովի էն ղրաղին վեր էկան։ Դավրիշի մորը իրան տեղը թողին։
Ուշապն ու իրան հարսը գնացին։ Քառասուն օրը թըմամել էր. թքավորի տղեն ձիանը սարքել էր, որ գնա. եդ մտիկ արավ, տեհավ, որ առաջվա նման թոզը գալիս ա. էնդով իմացավ, որ Ուշապն ա։ Գնաց ոչ չվել Ուշապի գալը։ Ուշապն էկավ հասավ։
Ասավ.— Հրե՛ս քու կնիկը, էս էլ քու ղութիկն ու ղամեն։
Թքավորի տղեն շատ ուրախացավ, ասավ.— Ուշապ ախպեր ջա՛ն, էդքան լավութին որ ինձ արիր, ես ի՞նչ անեմ, որ քու լավութենի տակիցը դուս գամ։
Ասավ Ուշապը.— Ինձ հասել ա քու լավութինը, ես քու արած լավութենի չարեքը չեմ արել։
— Ի՞նչ լավութին ունիմ քի արած, Ուշապ ախպեր ջան,— ասավ թքավորի տղեն։ Ասավ Ուշապը.— Ես էն մեռլի ֆոքին եմ, որ դու պարտքերը տվիր,— ասավ ու անհետացավ։
Թքավորի տղեն արմացավ, մնաց։ Եդնա թքավորի ախչկան առավ ու գնաց իրա հոր տունը։
Հերը շատ ուրախացավ, բերուց նորից օխտն օր, օխտը քշեր հրսանիք արավ։ Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։
Չարն ընդի, բարին ըստի։
Աստծանե իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ ալամ աշխարքին։